

ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Շաբաթ, Փետրուար 20ի առաւօտուն Առաջնորդարանի մէջ տեղի ունեցաւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբին հերթական ժողովը, որուն նախագահեց Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Ատենապետութեամբ Տիար Արմէն Դամբարի:

Ժողովի ընթացքին ուրախ լուրեր հաղորդուեցան Մայր Տաճարի կառուցման աշխատանքներուն մասին՝ յուսալով, որ Յունիս ամսուան մէջ կառուցունը ամբողջացած կ'ըլլայ: Աստուծոյ կամքով Մայր Տաճարին Նաւակատիքը Առաջնորդ Սրբազան Դօր հանդիսապետութեամբ եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականներուն, պիտի կատարուի Ապրիլ 30ին: